ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՀԵՏ

02.11.2021 16:04

Նոյեմբերի 2-ին ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանն այցելել է Արմավիր և Էջմիածին քաղաքների հանրային պաշտպանի մարզային գրասենյակներ, հանդիպել հանրային պաշտպաններին:

Սիմոն Բաբայանը գործընկերներին է ներկայացրել Հանրային պաշտպանի գրասենյակի նորանշանակ ղեկավար Գևորգ Մկրտչյանին, նշելով, որ վերջինիս կազմակերպչական փորձն ու կառավարչական հմտությունները նպաստելու են Հանրային պաշտպանի գրասենյակի առաջ դրված խնդիրների արդյունավետ լուծմանը և շարունակական զարգացման ապահովմանը:

Ներկաները խոսել են հանրային պաշտպանության ինստիտուտի զարգացման ուղղությամբ իրականացվելիք քայլերի, հանրային պաշտպանների գերծանրաբեռնվածության, գրասենյակների տեխնիկական հագեցվածության և մի շարք այլ հարցերի մասին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })